ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 մարտի 2016 թվականի N 54-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ԱՐԳԵԼԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԱԶԱՏՄԱՆ, ՏՆՕՐԵՆԻ ՆՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6.2-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի հուլիսի 10-ի N 297-Ա որոշումը, ինչպես նաև *Ե. Արզումանյանի* և *Ն. Մարտիրոսյանի* անձնական դիմումները՝ **որոշում եմ.**

1. ***Ելիզավետա Արզումանյանին*** 2016 թվականի մարտի 3-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի առողջության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի պաշտոնից:

2. ***Նաիրա Մարտիրոսյանին*** 2016 թվականի մարտի 3-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի առողջության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով (տնօրենի թափուր պաշտոնում) պաշտոնի նշանակումը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի առողջության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի մարտի 03
ք. Հրազդան